ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2022 թ.

Հետք Մեդիա Գործարանի ուսանող-լրագրող
Էմիլյա Հոսյանից
Էլ. փոստի հասցե՝ emiliahosyan@gmail.com
Հեռախոսահամար՝ 077 64 74 88

Ի պատասխան Ձեր 13.12.2022թ.-ի տեղեկատվական հարցմանը
Հարգելի տիկին Հոսյան

2022 թվականի պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետարանին «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով հատկացված է 76106.0 հազ. դրամ: Նշված գումարը հատուկ առաջադրանքները և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար յուրաքանչյուր ամիս տրվում է մարզպետարանի աշխատակիցներին: Պարգևատրման չափը հիմնականում կազմում է աշխատողների դրույքաչափի 15-17 տոկոսը: Իրավական ակտերով սահմանված չափորոշիչներ չկան, հաշվի են առնվում նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությունը և տրված հանձնարարականների կատարման արդյունավետությունը:

«Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով 2022 թվականին ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացվել է 35111.3 հազ. դրամ, որը ըստ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի տրվում է մարզպետարանի քաղաքացիական ծառայողներին՝ համաձայն իրենց կիսամյակի կատարողականների գնահատման արդյունքների: Պարգևատրում տրվում է տարվա մեջ երկու անգամ, չափը կապված աշխատողի կիսամյակի կատարողականի գնահատման տատանվում է դրույքաչափի 60-80 տոկոսի սահմաններում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները, որոնց մեջ մտնում է նաև պարգևատրման գումարները, աշխատողների անձնական տվյալներ են և ենթակա չեն հրապարակման:

16/12/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. Ա. Բեջանյան
հեռ. /0322/ 4 34 99